



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1483

83

Q-56

707 10/IV 38

2011

2003

83  
6-56

ՇՐԼԼԵՐ

44

ՄԻՅԼՈՄ ԹԻԼԼ

ՅՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

ԹԱԳԲԱՆՆԱՑ

ՄԻԲԱՅԷԼ Ա. ԿԻԿԼԱԳԵԱՆ

ՍՆԴԱՄ ԳԱՐՏՈՒՂԱՐԱՑ ԴԻԱՆԻ  
ԱՐՏԱՑԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՇՏՕՆԱՏԱՆ  
ՈՐ Ի Բ. ԴՈՒՂ

5560



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ  
Հանրապետական Գրադարան  
7/11-1022  
Հունիս 1 Մարտի 1922  
ՅՐԵՐԳՈՒԹԻՒՆ  
Ս. ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

303  
8

Ա. ԸՆԹԵՐԿՈՂՈՒ

Արդէն յայտնի է Նիլէր Գերմանացի հոշակաւոր բանաստեղծին հեղինակութեանց մինչև ցարդ գտած ընդունելութիւնը : Անոնցմէ մէկն է նաև Կիթ[ՕՄ] [1] Թիլ[Լ] անուն ընտիր ողբերգութիւնը , զոր Պ. Ա. Մէլիօ գաղղլարէնի թարգմանած է : Մեր ևս մինչև հիմա Հայոց ազգին մէջ իւրցս ընծայուած թարգմանութեանց վրայ հատ մ'ալ աւելցնելու փախաքով ձեռք զարկինք սոյն ողբերգութիւնը իւր գաղղլարէն թարգմանութենէն սլարդ սձով 'ի հայ բարբառ վերածել : Այսու ամենայնիւ թէ անձանց և թէ քաղաքաց բոլոր անունները իրենց ճիշտ Գերմաներէն հնչմամբը պահուած են :

Կը յուսամ որ Հայ հասարակութեան կողմանէ ինչպէս ուրիշ թարգմանութիւններու՝ նոյնպէս ալ այս ողբերգութեան փոքր ինչ ընդունելութիւն կըլլայ : Չեմ կրնար առանց խոստովանելու անցնիլ թարգմանութեանս թերութիւններուն վրայ , որոց անշուշտ իմ Սիրեյի Ազգին գրագէտները իրենց ներուժը պիտի շնորհեն :

2 Մարտ 1874

Մ. Ա. ԿԻՒԱԳԵԱՆ

(1) « Լ » գիրը՝ այնչափ ուժգին հնչելու չէ :

ՀԷՐՄԱՆ ԿԷՍԼԷՐ . Թույլձի և Ռարիի [1] ևսնակցաց  
 Այլ Աւստրիոյ տէրաւրեան կուսակալը :  
 ՎԷՐՆԷՐ , Իշխանն Աթենքի և ՍՈՒՉԷՆԻ [2] Պարսն :  
 ՌԷԼՐԻԹ ՏԸ ՐԻԷՏԷՆՏ , Իւր Լորտորդին :  
 ՎԷՐՆԷՐ ՄԹԱՌԻՓԱԽԷՐ [3]  
 ՔՕՆՐԱՏ ՀՈՒՆ  
 ԻԹԷԼ ՐԷՏԷՆԿ  
 ՀԱՆՍ ԱՌԻՓ ՏԷՐ ՄՍԱՌԷՐ  
 ԵՔՕՐԿ ԻՄ ՀՕՓԷ  
 ՌԷԼՐԻԹ ԼԸ ՓՕՐՓԷՐՕՆ զարրինն  
 ԵԷՕՕԹ ՏԸ ՎԷՅԼԷՐ  
 ՎԱԼԹՀԷՐ ՓԱԻՐԱԹ [4]  
 ԿԻՅԼՕՄ ԹԷԼԼ  
 ՐՕՍԷԼՄԱՆ , քանակաց  
 ԲԷԹԷՐՄԱՆ , Լուսարարկաւ աղա-  
 ՔՌԻՆԻ , Հովիւ [աւստր Լիկեղցոյ]  
 ՎԷՐՆԻ , Ռատրո  
 ՐԱԻՏԻ , Չըկույս

Բնակիչք  
 Թույլձի

Բնակիչք Ռարիի

[1] Ռարի Թույլձի և Ռերկրվարս , այս երեք նա-  
 չանդներն կին որ Աւստրիական տէրաւրեան ղէմ  
 1307 ին առաջին անգամ ապստամբեցան :

[2] Արևելահասոյցն . Թույլձի նահանգին մէջ Դոր-  
 փի ղիւղ մ'է , Բէօս գետին ձախ եզօրին վրայ , ղէմ  
 յանդիման Ալթօրֆի .

[3, 4] Վերնէր Սրատֆախէր , Շիլէյնկենն (Թույլձի)  
 Վաչրնէր Փարսո , Աթենքի հասոյցենն և Սրնօրս տը

ԱՐՆՕԼՏ ՏԸ ՄԷԼԻԹՀԱԼ [5]  
 ՔՕՆՐԱՏ ՊԱՌԻՄՎԱՐԹԷՆ  
 ՄԷՅՆԷՐ ՏԸ ՍԱՐՆԷՆ  
 ՍԹՐՈՒՏՏԸ ՎԻՆՔԷԼՐԷՅՏ  
 ՔԼՍՌԻՉ ՏԸ ԼԱ ՓԼԻԻ  
 ՊՌԻՐԻՍԱՐՏ ԱՄ ՊՌՈՒՀԷԼ  
 ԱՐՆՕԼՏ ՏԸ ՍԷՎՎՍ  
 ԲՓԷՅՓԷՐ ՏԸ ԼՈՒՉԵՐՆ  
 ՔՌԻՆՉ ՏԸ ԿԷՐՄԱՌ  
 ԺԷՆՆԻ , Երխասարդ քրկուրսք  
 ՄԷՐԲԻ . Երխասարդ Լովիւր  
 ԿԷՐԹՐՈՒՏ : Սրատֆախէրի կիւր  
 ՀԷՏՎԻԿ , Թէլլի կիւր և Փարսի աղիկր  
 ՊԷՐԹՀԱ ՏԸ ՊՐՈՒՆԷՔ , Հարաւսա աղիկր

Բնակիչք Ռերկրվարսի

ԱՐՄԿԱՐԹ  
 ՄԷԹՀԻՏ  
 ԷԼԻՍԱՐԷԹ  
 ՀԻՏԷԿԱՐԹ

Գաւառացիք

ՎԱԼԹՀԷՐ  
 ԿԻՅԼՕՄ

Թէլլի սրդիք

Մէլիսիոս , 1307 Նոյեմբեր 7 ին Րարիի (Ռերի) վրայ  
 գտնուած վարդըրկեր ընն եղերքը երգացան , իւրա-  
 բանչիւրը տանական ընտրեալ բարեկամներու հետ  
 Հեղվեալոյ աղաաւթեանը համար ղինուորիլ : Այս  
 պատը երկրորդ արտուածին երկրորդ պատկերը պի-  
 տի ներկայացնէ :

[5] Տես Ծանօթութիւն 3 , 4 :

ՓՐԻԷՍԵՐԹ  
ԼԵՅԹՅՈՒՏ

Ձիկուորք

ՐՕՏՈՒՓ ԼԸ ՀԱՐՐԱՍ . Կէտէրի ախտուպէտը  
ԺԱՆ ԼԸ ԲԱՐԲՍԻՏ (հայրասպան), Յուարի դուքսը  
և Արպէրը կայսեր կորոնորդին :  
ԹԹՈՒՍԻ, Պանուպան դաշտային

Ուրիի փողահարը  
Կայսերական Սուրհանդակ մը  
Գործաւար մը, (Գրուխ գործաւորաց) :  
Քարադործ մը  
Օգնականք, Գործաւորք և Արուեստաւորք :  
Մունեակներ  
Վէյ Գթութեան Եղբ. [Frères de la Miséricorde]  
Կէտէրի և Լատենպէրիկի [1] ձիւտորները :  
Բազմութիւն բնակչաց Երկն Նահանգաց, արանց  
կանանց և մանկանց .



# ԱՐԱՐՈՒԱՆ Ա.

## ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Թատրուը, Յոսիգի դէմ գտնուած Չորից-Նու-  
հանգաց ընկե քաղաքայտու կորկրէն զատ ի վեր  
տեղ մը կը ներկայացնէ : — Լիճը հողուն վրայ  
խոյը մը կը ձևացնէ . կզերքը փոքրիկ խոշոր  
մը . ընկե վրայ կրխատասար ձրկնորս մը կը նու-  
ւարիկ : — Միտ կզերքը՝ տեսարանին ներսօքր,  
արեգակուն մէջ կանուչ մարգարտիտիներ, Յոսիգի  
նահանգին քաղաքները և տնակները կ'երևան :  
— Զոյս կտրի՛ շաքիկ ընտան անկաճարս զա-  
ցարները կ'երևան : — Այ կտրի՛ ներսօք, ստու-  
նակիցները կը նշնարտին : — Գիտ վարագոյրը  
չը բացուած հովտակուն կրգեր կ'իմացտին . նաև  
հոսից զանգակաց ներդարնակաւոր ձայնը . որև  
որ վարագոյրը բացուել յետոյ քիչ մը ժամանակ  
աչ կը շարունակուի :

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԺԵՆԵՒԻ, Երխտասարդ ձրկնորսը իւր նատակին  
մէջ կրգերով :

( Եղուն-ի հովտան )

Լիճը կը խայտայ, լողանաց կը հրախլի, մա-  
նուկը կը նիւրհէ կանաչեզարդ եզրին վրայ . քաղցրու-  
նաւագ զեղեզեղութք մը ընկ կը կտրծէ, սրնգի և Ար-

[1] Լատենպէրիկ, Ունթէրվալտի նահանգին կու-  
տակայը :

բայտ թեան հրեշտակոց ձայնին նման բաղար :

Արբ կարթննոց զբարձաթեամբ գինովացած , ոչ  
գորիչ ախիբները իւր կարծքը կը լուսն և լճին մէջէն  
ձայն մը իրեն կրտէ : « Մանուկդ սիրելի , ինչ ես դո՛ւ ,  
ննջողը կը հրապուրեմ և զանի ի խորս ջուրց կը  
բարչեմ » :

ՍԷՐՅԻ , Երիտասարդ հովիւր շեռան վրայ երգելով :

( Փոփոխութիւն հոգեւորական եղանակ )

Մնայք բարեան մարդագետներ , մնայք բարե-  
կան . արօտատեղիք տակեղծեալք արեգակամբ :

Պէտք է հովիւրը զձեզ թողու , քանզի ամառն անցաւ :

Պիտի վերադառնամք դարձեալ այս լեռան վրայ  
կերր կիրան սկսի կանչել , երբ գայլայլիկները արթնն-  
ան , երբ երկիրը նոր ծաղկիներով պճնաի , երբ  
բաղար Մայիտի վտակները հասին :

Մնայք բարեան մարդագետներ , մնայք բարեան  
արօտատեղիք տակեղծեալք արեգակամբ : Պէտք է  
հովիւր զձեզ թողու . քանզի ամառն անցաւ :

ՎԷՐՆԻ , Պատրոշք դէմք գաւուրս ժայռիկ գաղա-  
քէն կերակոց :

( Եւրոպ փոփոխութիւն )

Նրկներ կ'որոտայ , ճանապարհը կը սարսի , որ-  
տողը չի գտլոր թաղիւտոր շաղին մէջ : Ստաշէն  
գալախն վրայ համարձակ առաջ կերթայ : Արբ բնաւ  
դարձն մը չի շարտ և ոչ ալ կանաչ ճիւղ մը : Իւր  
տարերուն տակ մատախաղը կարծես ծովու պէս կը  
տարածի , ալ չի ճանչնար մարդկանց բնակարանն :

րբ . միայն ամբողջ պատասուածքներէն աշխարհիս ե-  
րեսը կը տեսնէ , և թանձրախիտ ամպոց տակ դա-  
ւաբաղկեայ գիւղորէն :

Տեսարանը կը փոխուի , շեռան մէջէն նամբ  
շալիս մը կիւնցոտի , ամպոց շաքը թատարակէ կանցելէն :

### ՏԵՍԱԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

#### ՆՈՅՆՔ , ԲՈՒՏԻ Ժըկնորսը , ԳՈՒՆԻ հովիւր

ԲՈՒՏԻ , իւր խրճիթէն կեղեկ , ԳՈՒՆԻ , կրոցը տար ,  
ՍԷՐՅԻ , անոր ետեւէն , ՎԷՐՆԻ , ժայռէն կիւնէ :

ԲՈՒՏԻ . — Փոթթայ , ժէննի , նուր բաշէ :  
Փոթթիկ պիտի եղնէ : Ստանախոյաները կը թնդան :  
Միթ ճէնի [1] գազաթը ամպերով կը ծածկուի : Մըրկի  
պող հով մը կը փչէ : Կործեմ փոթթիկը մեր դա-  
շակածէն աւելի կոնուխ պիտի հռանի :

ԳՈՒՆԻ . — Նաւաւար , պիտի անձրի է : Ոչխոր-  
ներս անյագութեամբ կը ճարակին և շունս հողը կը  
քէրէ :

ՎԷՐՆԻ . — Չաւիբը կը ցատկեն և ծովահաւը  
կը սողի : Փոթթիկը մերձ է :

ԳՈՒՆԻ . — Զգուշացիր , Սէրբի , հօտը չի ցրտի :

ՍԷՐՅԻ . — Թխամորտ Այգի դանգաւը կը լսեմ :

ԳՈՒՆԻ . — Ըսել է որ ոչխարները ամբողջ են ,  
քանզի նա է որ ամենէն հեռուն կերթայ :

[1] Միթիկն , Ետիլի մօտ ամպամած լեռ մ'է :

ԲՈՒՏԻ . — Գեղեցիկ զանգակ մը ունիք , Գ ,  
Հովիւ :

ՎԷՐՆԻ . — Եւ գեղեցիկ կենդանիներ . . . Ա .  
տոնք ձե՞րն են :

ՔՈՒՆԻ . — Այնչափ հարուստ չեմ . . . տի-  
րոջս են , Աթէնիկհատուղէնի լեխանին , որոնք ինձ  
յանձնուած են :

ԲՈՒՏԻ . — Ժողովուրդը ի՞նչ աղէկ վայեր է սոյդ  
կովուն վրին :

ՔՈՒՆԻ . — Ի՞նքն ալ զխոտ արդէն որ այս հոտը  
վարողը ինքն է , եթէ ատի վղէն հանեմ՝ երբէք ձա-  
լակել չուղէր :

ԲՈՒՏԻ . — Ո՛հ . . . սրտալ խօսք կընէք : Ան-  
խելք կենդանի մը . . .

ՎԷՐՆԻ . — Խիստ շուտ կը վճուէք : Անասուն-  
ներն ալ խելք մը ունին : Լեռնայծի որսորդ ըլլա-  
լովիս , մեր տօնիսց աւելի աղէկ զխոտե՞ք : Երբ լեռն-  
այծները ճարակել կուգան , իրենցմէ պահապան մը կը  
գնեն՝ որն որ ախանջները կը սրէ և եթէ որսորդ մը  
մօտենայ՝ սաստիկ ճիկով մը միւսներուն կլմնոյնէ :

ԲՈՒՏԻ . Հովիւի . — Զեր հոտը նե՞րս կը ամառիք :

ՔՈՒՆԻ . — Այո՛ , լեսը ցամբած է :

ՎԷՐՆԻ . — Բարի դարձ կը մտայթեմ , հո-  
վի՛ւ :

ՔՈՒՆԻ . — Նոյ՛ը ձեզի կը մտայթեմ : Դատ ան-  
գամ՝ ձեր ճանապարհներէն ետ չի դարձուիր :

ԲՈՒՏԻ . — Ահաւասիկ մարդ մը՝ որ բազմ ու-  
ժովը վաղելով հոս կուգայ :

ՎԷՐՆԻ . — Կը ճանչնամ զինքը , Ալձէլլէնցի [1]  
Պառավարթէնն է :

ՏԵՍԱԲԱՆ ԵՐՐՈՐԻ

ՆՈՅՆՔ : ՔՕՆՐԱՏ ՊԱՌԻՄԿԱՐԹԷՆ

ՊԱՌԻՄԿԱՐԹԷՆ . [ շերտարտ վագիրով ] — Աստ-  
ուածդ սիրես , նաւալմոր . նաւակդ :

ԲՈՒՏԻ . — Ի՞նչ կոյ , ի՞նչ կոյ սոյդչափ շուտ :  
ՊԱՌԻՄԿԱՐԹԷՆ . — Բակի՛ , զիս ջուրէն ան-  
ցո՛ւր : Կեանքս պիտի ազատես :

ՔՈՒՆԻ . — Բայց ի՞նչ ունիք , բարեկամ :

ՎԷՐՆԻ . — Ո՞վ է զձեզ հետադոտողը :

ՊԱՌԻՄԿԱՐԹԷՆ . [ ճշկնորսին ] — Փաթակի՛ք ,  
տճապարեցէ՛ք : Մօտեցան : Կուսակալի ձիաւորները  
զիս կը հալածեն , եթէ համին՝ մեռած եմ :

ԲՈՒՏԻ . — Կուսակալի ձիաւորները ինչո՞ւ զձեզ  
կը հալածեն :

ՊԱՌԻՄԿԱՐԹԷՆ . — Նախ ազատէ՛ զիս , յետոյ  
կը սրտմեմ :

ՎԷՐՆԻ . — Արեամի՛ ծածկուած էք . . . ի՞նչ  
եղաւ :

[1] Ալձէլլէն , Ունթէլլուլտի նահանգին մէկ ա-  
բանը :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Կայսեր կուսակալը Ռոզպեր,  
կի մէջ . . .

ՔՈՒՆԻ . — Վրթնէլոյրը : Ի՞նքն է որ զձեզ կը  
հալածէ :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Ի՞նքը . . . բայց ա՛լ բան  
մը չի կրնար ընել, զինչը սպաննեցի :

ԱՄԵՆՔՂ ՄԻԱՏԵՂ, [ Լա Լա քաշուերով ]  
Սյդ ի՞նչ բան էք ըրեր : Աստուած սրտապարէ զձեզ :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Ըրի, ինչ որ իմ տեղ աւ  
զտտակը մէկը ըլլար պիտի ընէր : Նախնեացս միջժը  
ատի այն մարդէն, որ իմ և կնոջս սրտուցն կը դա-  
բանէր :

ՔՈՒՆԻ . — Կուսակալը ձեր սրտուցն ղէմ բա՛ն  
մը ըրաւ :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Աստուած և կայինս արդիւ-  
նեցին զինքը իւր շար խորհուրդը կատարելէ :

ՎԵՐՆԻ . — Ձեր կայինս՞ մը իւր զըլսը կտրե-  
ցիք :

ՔՈՒՆԻ . — Ո՛հ, սրտուցեցէ՛ք մեզ մի առ մի,  
մինչ որ նուակը քակէ :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Անտառին մէջ փայտ կը տա-  
բել դացած էի, աեսայ որ կինս մահամերձ տաղաւ-  
սպա կը վազէ . . . Կուսակալը տաւա է եկեր . . .  
Քաղնիք մը սրտորատակ հրամայեր է . . . յետոյ ըս-  
կըսեր է ամօթալի ատաջարկութիւններ ընել . . .  
Կինս ալ զիս բնտուելու համար փոխեր է : Իսկոյն  
տաւն վազեցի և իւր բաղնիքը կայինտիս օրհնեցի :

ՎԵՐՆԻ . — Շո՛ւտ լաւ ըրեր էք, մարդ չի կըր-  
նար զձեզ մեղադրել :

ՔՈՒՆԻ . — Թշուտտակունը . Հիմոյ իւր վարձը  
տաւա : Երկար ժամանակէ ի վեր այսպիսի սրտով  
կարժանանար Ունթէրվալտի ժողովուրդեան ղէմ բըռ-  
նած ընթացքին համար :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Այս բանը աշխարհք իմա-  
ցաւ, զիս կը բնտուեն . . . Մինչդեռ մեր հոս կը խօ-  
սիմք . . . Աստուած իմ . . . ժամանակը կանցնի . . .

( Որոտու՛ն է կէտէ )

ՔՈՒՆԻ . — Շո՛ւտ, նախաւոր . . . այս քաջը  
ըրին անդիլի կողմը անցաւը :

ՐՈՒՏԻ . — Անհնար է : Պէտք է սպասել : Սաս-  
տիկ փոթորիկ կայ :

ՊԱՌԻՄԿԱՐԹԵՆ . — Պթութիւն երկի՛նք, չեմ  
կրնար սպասել : Ամեն ուշացած վայրկեանը մահս կը  
մտակցենն :

ՔՈՒՆԻ . [ ճրկնորսին ] . — Փութայ, Աստուծոյ  
օգնութեամբը : Պէտք է իւր նմանին օգնել, օր մը  
միւնեցն արկածը մեր դիխուռն ալ կը սպասա՛նի :

( Որոտու՛ն է և ունեաց յաւնու՛ն է )

ՐՈՒՏԻ . — Փութորիկը բրթաւ, կը տեսնէ՞ք տ-  
լիքները մինչև ո՞ւր կը բարձրանան, չեմ կրնար ալ  
եաց և փոթորիկն ղէմ թխափարեւ :

ՊՍՈՒՄԿԱՐԹԵՆ . [ Բուտիի Տեգսըր Դարերով ] —  
Որչափ որ դուք իմ վրայ կը գթաք , այնչափ ալ  
Աստուած ձեզ օգնէ . . .

ՎԵՐՆԻ . — Գթայ իրեն , նաւաւար , կեանքը  
վտանդի մէջ է :

ՔՈՒՆԻ . — Ընտանեաց հայր մ'է , կին և զա-  
ւակներ ունի :

( Որո՞րք են և քանի՞նք )

ՐՈՒՏԻ . — Լաւ , իմ կեանքս ալ կրնայ վտան-  
գիլ . ես ալ իրեն նման կին և զաւակներ ունիմ . . .  
Տէսէ՛ք ինչպէս լիճը կը փրփրի , ինչպէս սլիքները կը  
դիզուին . Ըուրերը լճին մինչև խորը կը ծփան : Ես ալ  
կուզեմ այս արդար մարդը աղատեմ , բայց դուք ալ  
կը տեսնէք որ անհնարին է . . .

ՊՍՈՒՄԿԱՐԹԵՆ . [ միշտ Տեգսան վրայ ] . — Որեմն  
պէտք է որ թշնամեացս ձեռքը լյնտով , հո՛ս փրկու-  
թեան գետեղրին դէմ : Ահաւասիկ տչքերս զայն  
տեսնեմ կը զօրեն , ձայնս հոն կրնայ հասնիլ . նա-  
աւի մ'ալ կայ որ զիս հոն կրնայ տանիլ . և սէտք  
է հո՛ս յուսահատ և անօգնական մնամ . . .

ՔՈՒՆԻ . — Տեսէ՛ք , ո՞վ է եկողը .

ՎԵՐՆԻ . — Պիւրիլէնցի Թէլլ է :

ՏԵՍԱՐԵՆ ԶՈՐՈՐԳ

ՆՈՅՆԻ . ԿԻՅԼՕՄ ԹԵԼԼ , իր աղերսը :

ԹԵԼԼ . — Ո՞վ է այս մարդը՝ որ օչնութիւն կը  
գոչէ :

ՔՈՒՆԻ . — Ալճելէնցի մ'է , որ իւր սրտիւը  
սլաշտարաներով Վօլֆընչիցը սպաններ է , կայսեր կու-  
տակալը , որ ի Ռօզպէրկ . . . կուտակալին ձխուորնե-  
րը վինըր կը հաւածեն : Կաղաչէ նաւաւորին որ զին-  
քը դիմաց անցունէ : Բայց այն ալ փոթորկէն վախ-  
նալով երթաւ չուզէր :

ՐՈՒՏԻ . — Կեցիք , տեղի լաւ , Թէլլ հոս է ,  
զիտէ նա թխավարեմ , թող ըսէ , միթէ կանցնուի՞ :  
[ Սաստիկ որտունսնք և կայժակք , աղիքները կատունսն ] :  
Կ'Ժօ՛րք նետեմ ինքզինքս : Ատի խենդի գործ է :

ԹԵԼԼ . — Քաջ մարդը՝ ամեն բանէ վերջը ինք-  
զինքը կը մտածէ : Յոյսդ Աստուծոյ վրայ զի՛ր և վախ-  
կէ այս խեղճը :

ՐՈՒՏԻ . — Յամարի վրայ խօսիլը դիւրին է , ի՞նչ  
պէտք կայ երկտր բարակ խօսքերու : Ահաւասիկ նաւը  
և լիճը : Փորձեցէ՛ք :

ԹԵԼԼ . — Լիճը կողորմի , բայց կուտակալին ձի-  
աւորները ո՛չ երէք : Փորձէ նաւաւար :

ՀՈՎԻԻՔ և ՈՐՍԱՐԻՔ . — Փրկեցէ՛ք , փրկեցէ՛ք  
դի՛քը :

ՐՈՒՏԻ . — Զաւակս ըլլայ , եղբայրս ալ ըլլայ

Քարձեալ անկարելի է : Այսօր Սուրբ Միսն և Սուրբ Յագայի տօնն է : Լինը կատարած է և իւր սրբը կը բնասէ :

ԹԵԼԼ . — Աւնայն խօսքերով բան մը չըլլար , ժամանակը կանցնի , պէտք է օգնել այս մարդուն : Խօսէ՛ նաւաւար , կուզե՞ս երթալ :

ԲՈՒՏԻ . — Ոչ , ես չեմ կրնար :

ԹԵԼԼ . — Լաւ տրե՛մն , տուր նաւակը , Աստուած ուրբում է : Կրցածս պիտի ընեմ :

ՔՈՒՆԻ . — Սէ , քաջի ԹՅԼ :

ՎԷՐՆԻ . — Արտորդութեան արժանի է :

ՊՍՈՒՄԿԱՐԹԵՆ , — ԹՅԼ , դու իմ վրիկչս և խնամակալս ես :

ԹԵԼԼ . — Ես միտայն կռտակալին բարկութեանն գրեզ կրեամ աղաատել , բայց տրիչ մ'ալ , Աստուած . պէտք է որ վտթորկին վտանգներէն ազատեմ : Ստիպեմ լաւագոյն է Աստուծոյ ձեռքը կցնալ՝ քան թէ մարդկանց : [ Հավիտիկն ] , Բնիկեր , եթէ ինձ դժբախտութիւն մը հասնի , մխիթարէ իմ կինը : Քանզի ինձ համար անկարելի էր չընել ինչ որ կ'ընեմ : [ Նաւակը կը ցատկէ ] :

ՏԵՍԵՐԱՆ ՀԻՆԵՐՐՈՐԳ

ՆՈՅՆԻ. բացի ԹԵԼԼԵՆ և ՊՍՈՒՄԿԱՐԹԵՆԵՆ

ՔՈՒՆԻ . — Դ՛ուք , որ վարպետ նաւաւար մը էք , Թէլլին ըրածը չի՞րք կրնար ընել :

ԲՈՒՏԻ . — Ամենէն քաջ մարդն անգամ , Թէլլին ըրածը չի պիտի կրնար ընել : Լեռան մէջ իրեն նմանը չի կայ ,

ՎԷՐՆԻ [ քարամայրիկ վրայ կրտ ] — Բաւական բացուեցաւ : Աստուած օգնէ , քաջի թխաւոր : Տե՛ւսէք , ինչպէս ալիքները վարրիկ նաւակը կը տարուբերեն :

ՔՈՒՆԻ . [ գետկողն ] — Ալիքները վրայն կ'անցնին . . . ալ չեմ տեսներ զայն . . . բայց կեցէք . . . , տհաւատիկ կրկին կ'երևնայ : Քաջի ԹԵԼԼ , բողբոմ ոչխատութեամբ և նեղութեամբ կոհակնեւրուն մէջէն անցք մը կը բանայ :

ՍԷՐԲԻ . — Կուսակալին ձիաւորները վագերով կուգան :

ՔՈՒՆԻ . — Աստուած իմ , յիբաւի անոնք են : Ճիշդ ժամանակին հասան :

ՏԵՍԵՐԱՆ ՎԵՏԵՐՐՈՐԳ

ՔՈՒՆԻ , ԲՈՒՏԻ , ՎԷՐՆԻ , ԺԵՆԵԻ , ՍԷՐԲԻ և կուսակալիկ խումբ մը ձիաւորները : ԱՌԱՋԻՆ ԶԻԱՒՈՐ . — Յանձնեցէ՛ք մեզ այն մարդատպանը՝ որուն աղաատան եզար :

Բ. ԶԻԱՒՈՐ . — Մնօգուտ է զինքը օրակել :  
շիտեմք այս ճամբէն եկաւ նա :

ԳՈՒՆԻ և ԲՈՒՏԻ . — Որո՞ւ համար կը խօսիք :  
Պ . Ձիաւոր :

Ա . ԶԻԱՒՈՐ [ Ետևս կը նշարեմք ] — Մ՛հ , ի՞նչ  
կը տեսնեմ : Ո՞վ կատարութեանս :

ՎԵՐՆԻ . [ քարածայրին վրայէն ] — Նուտիկն  
մէջ եզօ՞ղը կը բնտռէք : Քաջութիւն , մտրակեցիք  
ձիւրնիդ : Եթէ անասորէք կրնաք դեռ զինքը բռնել :

Բ. ԶԻԱՒՈՐ . — Ա՛ն՛ձք , փախաւ նա :


Ա . ԶԻԱՒՈՐ . [ Հովիտի և Զրիկարիին ] . — Դ՛ուք  
օգնեցիք իրեն որ փախչի . . . այդ ձեր քովը չի  
պիտի մնայ : [ Զօրացը : ] Հօտերուն վրայ ընկէք : Զար-  
կէք , պրեցէք և խորտակեցէք բնակարանները :  
[ Զօրքերը վազեցան կերպով հօտերուն վրայ յարձակելու ] :

ՍԵՅՏԻ . [ իրենց հետեւեցան ] . — Վ՛ա՛հ , սջխար-  
նէրս :

ԳՈՒՆԻ . [ անոնց ետեւէն երթալով ] . — Վ՛ո՛յ ինձ  
փո՛յ հօտիս :

ՎԵՐՆԻ . — Վ՛այրագներ :

ԲՈՒՏԻ . [ ձեռքերը ոտրեցան ] . — Ո՞վ երկինք  
այս երկրիս փրկեցաւ ե՞րբ պիտի դայ . շնորով ետեւ  
Եւն կերպայ :



### ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Քատրոնը՝ Յուլիանի յրկնէն գաւառին մէջ Սրաւ-  
Յախիթի տանը նստալով կը ներկայացնէ : Յունը՝  
կամարչիէ քով մե՛ծ ճակարակ վրայ շինուած , ո-  
րուն յիմացը բերիի ծառ մը կայ և ստորալը  
Ետևսուն մը :

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌՅՈՒՆ

ՎԵՐՆԻՆԻ ՍԹԱՌԻՑԱԽԻՆԻ , ԲՅԵՅՏԻՆԻ  
ՏԸ ԼՈՒՁԵՐՆԸ խօսեցան կը մտնեն :

ԲՅԵՅՏԻՆԻ . — Ա՛յո՛ , այո՛ , Պ . Սթաւոփախեր .  
ինչպէս որ ձեզի կըսէի , եթէ կրնամք՝ Զանա՛ք որ  
Աւարիոյ չ'երդնու՛մք : Ինչպէս առաջ՝ նոյնպէս ալ  
հիմա՝ քաջութեամբ և հաստատութեամբ Տէրութեան  
յարեցէք : Աստուած պահպանէ՛ ձեր հնօրեայ աղա-  
տութիւնը : [ Անոր ձեռքը քարեկամարար սղոյնով  
երթայ կուզէ :

ՍԹԱՌԻՑԱԽԻՆԻ . — Բի՛չ մ'ալ կեցէք , սպասե-  
ցէք կինս գայ : Հո՛ս , Յուլիանի մէջ դուք իմ՝ հիւրս էք ,  
Լուսնի մէջ ալ ես ձերը :

ԲՅԵՅՏԻՆԻ . — Ե՛տա շնորհակալ եմ , բայց այսօր  
մինչև կերպառ պիտի երթամ . . . Որչափ որ ալ  
նեղութիւն կրէք ձեր կուսակալաց յանգուզն աղա-  
հաթեանն , նայեցէք որ համբերութեամբ տանիք դա-  
նունք : Գործերը շուտով կը փոխուին : Այնպէս որ  
կայսր մը դահը բարձրանալ : Բայց երբ անգամ մը

Աւարիոյ անձնատուր ըլլաք , ամեն բան ըննյած է ձ [ Կը.սկկկի ] :

Սրաուֆախէր քաղնայից , քաղնոցիկ վրայ կը նստի : Կէրոյուտ , իւր կիկը , կուգայ և զիկքը այնպիսի տիտուր տեսնելով ականք քով կը նստի և երկար ժաւնական քուրեակեր կրկուր կը նայի :

ՏԵՍԱՐՍՆ ԵՐԿՐՐԻՑ

ՍԹԱՌԻՖԱՍԻԷՐ ԵՒ ԿԵՐԴՐՈՒՏ

ԿԵՐԴՐՈՒՏ - — Ինչո՞ւ տխուր ես , բարեկամք իմ : Ջրեղ գրեթէ չեմ՝ ճանչնար : Շատ ժամանակէ՛ ՚ի վեր կը տեսնեմ՝ սր քու բոլոր հայեցուածքդ լի են տխրութեամբ բոց չեմ խօսիր . Գաղտնի վիշտ մը ունիս սրտիդ մէջ : Ըսէ՛ տեսնեմ , ի՞նչ է , հաւատարիմ կիկնդ եմ ես , վշտիդ կիկնդ . իմ բաժինը , կը սրահանջեմ՝ քեկնէ : [ Սրաուֆախէր ձեռքը ականք կերկրեցնէ և կը լռէ : ]

Ի՞նչ բան քու սիրտը կը ճնշէ : Ըսէ՛ ինձ : Օրհնեալ է աշխատութիւնդ , գործերդ յաջող կերթան . շտեմարաններդ լի , սրջտաններդ՝ և փայլուն ձիերդ լեռնէն առողջ վերադարձան և ձմեռուան համար պատրաստուած ըլլա գոմեր և ախոռներ գտան . . . Ահաւասիկ տունդ , գղեկի նման գեղեցիկ . նորալէն , ընտիր ասխտակներով կերտեալ , որոնք կարկինով պատշաճաւար չափուած և յարմարացուած են , փայլուն և զուարթ ըյս մը բազմութիւ պատուհաններ , բէն ներս կը գեղու . վրան գունագուն զինանշաններով և հանճարխմաստ տաճներով ծածկուած է , որ ճանտարկորդը անցած ժամանակ կանգ կառնու զա-

նոնք կարդարու և վրանին զմայլելու :

ՍԹԱՌԻՖԱՍԻԷՐ . — Յիրաւի . . . աունը խնատ շքեղ շինուած և զարդարուած . . . այլ աւանդ , կը գողայ այն հողը՝ որուն վրայ շինուած է :

ԿԵՐԴՐՈՒՏ . — Սիրելիդ իմ Վերնէր , ըսէ՛ ինձ , ի՞նչ ըսել կուզես :

ՍԹԱՌԻՖԱՍԻԷՐ . — Օր մը , այս թմբիկն տակ նստած էի , ինչպէս հիմա . և իմ ձեռք բերած երջանկութեանս վրայ կը խորհէի , երբ կուսակալը իւր յետագայներովը ձի հեծած ասկէ անցաւ . Քու նախիթի գլեակէն գալով : Այս ասունը զիմայը զտրմացմամբ կանգ առաւ , ես ալ . խեղցն ոտքի ելայ և խնամարժեքեմբ առաջ անցայ , ինչպէս որ պարտաւորութիւնս էր ընել այս քաղաքիս մէջ կոյսը ներկայացնող մէկու մը : «Որո՞ւնն է այս տունը» հարցուց շարանաւորեմբ մը , որովհետեւ որուն ըլլալը զիտէր : Բայց ես ալ իւր միտքը հասկնալով , պատասխանեցի «Տէր կուսակալ , այս տունը Տիրոջն հայտեր և ձերն է , ես ալ իբր պարզե ունիմ զայն» : Այն ժամանակ ըսաւ , «Շնորհիւն կոյսեր , այս բաղարին կուսակալն եմ և չեմ ուղեր որ քաղաքացիք ուղածնուն պէս տուներ շինեն և իշխանի պէս ազատ ասլոխն քաղաքիս մէջ . զիտեմ՝ ձեզի դնելիք արդեւրս » : Այս ըսաւ , ամբարտաւանութեամբ և խոժոռադէմ մեկնեցաւ , իմ սիրտս ալ տխրութեամբ և անհանգստութեամբ լեցուեցաւ այդ շար մարդուն խօսքերէն :

ԿԵՐԴՐՈՒՏ : — Տէր իմ և այր սիրելի : Կուզե՞ս կնոջդ մէկ անկեղծ խօսքը մտիկ ընել : Խնատունին նպէրիկ աղջիկը ըլլալուս կը պարծենամ : Քոյրերս և ես երկար զիշերները փութիմ կը մանկիկք , մինչդեռ

բարձրին զխաւորները , հոյս տուցը ժողովուած յ  
 հին թագաւորաց օրինաց գիրերը կը կարգային և ի-  
 րենց ծանր խօսակցութեանց նիւթն էր քաղաքին բա-  
 րեւաւութիւնը : Հմն շատ իմաստալից խօսքեր իմա-  
 ցայ . սովորեցայ ինչ որ իմաստունի մը սէտք է մաս-  
 ծել՝ և բարի մարդու մը փախարիլ : Այս բոլորը միտ-  
 յրս պահեցի : Արեւմն մտիկ ըրէ և ըսելիքս վրայ  
 մտածէ : Գիտե՞ս , այն բանը՝ որ դրեզ կը տխրացնէ ,  
 ես երկար ժամանակի ՚ի վեր զխտի : Առսակալը ոիս  
 ունի քեզի և հուզէ փաստ հասցնել , որովհետեւ դու  
 իրեն համար արդեւք մ'ես , քանզի Եռիցձի բնակիչ-  
 ները՝ Ասարից նոր տանը հպատակիլ չեն ուզեր :  
 այլ կը սնդեն հաստատ հաւատարիմ մնալ տէրու-  
 թեան , ինչպէս իրենց ատարինի նախնիքը : Այնպէս  
 չէ՞ , Ահլրնէր : Պատասխանէ , այնպէս չէ՞ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Մ'աղ է , ստուգիւ , հիւսկրի  
 ինձ դէ՞մ՝ ունեցած ատելութեան նպատակը :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Կը նախանձի քեզի , որովհետեւ  
 երջանիկ և սղոստ կապրիտ հայրենական ստացուածո-  
 յըրէ վրայ : Ինքը ատանկ բան մը չունի : Այս տունը  
 կապրը ինքնին և Տէրութիւնը սրարդեւած է քեզ ,  
 դու իրաւունք ունիս զանի յոյց տալու , ինչպէս երկ-  
 րին իշխանը՝ իւր կալուածները : Քանզի դու բու վը-  
 րայ ուրիշ Տէր չես ճանչնար բաց ՚ի Քրիստոնէութեան  
 զօրաւորացնի իշխանէն . . . Եւրը՝ ընտանեաց կըրտ-  
 սեր մ'է , և ասպետական վերարկուէն ՚ի զոտ ուրիշ  
 բան մը չունի : Աստի նախանձոտ աջօք և ատելու-  
 թեամբ ու մաղձով լի սրտով մը կը նայի նա բոլոր  
 բարի մարդկանց երջանկութեանցը վրայ : Ետո ժա-  
 մանակի ՚ի վեր է որ բու կործանուող մտքին դրած


1002  
5560

է . . . դու տակախն ողջ և առողջ ես . . . Բայց  
 կուզե՞ս սպասել որ զարձադրէ իւր շար խորհուրդն-  
 քը : Ի՞նչեմ՝ մտորը կը նախատեսէ և ապա կը զործէ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Ի՞նչ ընելու է :

ԿԵՐԴՐՈՒՑ . [ Թօսակարտ ] . — Ըսէ՛ որեւմն իմ  
 խորհուրդը : Արդէն գիտես որ հո՞ս : Եռիցձի միջ ,  
 բարեբարաց անձինք ի՞նչպէս կը դանդաւորն կուտակ-  
 լի շարութեանն , լու որեւմն . կարծեմ՝ Աւելիւրիւր-  
 տի և Արիի միջ ալ ճանճրացած են հարստահարու-  
 թեան անգութ լուծին . . . որովհետեւ ինչպէս հո՞ս  
 կիւսեր մեզի դէ՞մ , անգին , ընին միւս կողմը՝ Լանտնն .  
 սէրի ալ ամբարտաւանութեամբ կը վարաի բնակչաց  
 հետ : Աիկայ ճըկնորսի նաւ մը , որ հոս եկած ժամա-  
 նակ կուտակարաց անգթութիւնը՝ և անարժան գործ-  
 քերը չիմացնէ : Աղէկ չըլլար որ ձենէ մի քանի խե-  
 րայիներ ժողովը կազմեն և խորհին , որ ի՞նչ կերպով  
 այս հարստահարութեանն կարելի է աղտօսիլ , տարս-  
 հով եմ՝ որ Աստուած զճեզ չի պիտի թողու՝ և պի-  
 տի ողնէ . . . Ըսէ՛ տեսնեմ՝ , . . . Արիի միջ չունի՞ս  
 այնպիսի բարեկամ՝ մը՝ որ դրեզ ընդունի և որուն  
 ամենայն վստահութեամբ սիրադ կարենաս բանուլ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Հմն բռական բաճակիտ  
 մտորիկ կը ճանչնամ , խոհուն և աղղեցութեան տէր .  
 որոնց խորհրդապաշտութեան և անձնուիրութեան վրայ  
 կրնամ վստահիլ : [ Առջի կիշնէ : ] Կին դու , ի՞նչ-պի-  
 տանաւար խորհուրդներու միրիկէ որ կը յաղնս հան-  
 դարտ սրտիս միջ : Ամենակարին և անհամաձուտ  
 մեամունքներս կը յայտնես՝ ու կը լուսաւորես դա-  
 նոնք , ինչ որ լսիս անգամ՝ կ'արգիլեմ ինձ խախու-  
 զու յայտ համարձակ կը բացատրես զայն . . . Բայց



լու խորհեցա՞ր ինձ տուած խրատներուդ վրայ : Այո՞ ,  
 բնի գեօտութիւն և ղինուց շաչիւնը կը հրաւիրես այս  
 խաղաղ հովտիս մէջ . . . Մէք , խեղճ անդէսրէքս ,  
 միթէ կրնա՞ք աշխարհիս զօրաւորացոյն իշխանին  
 հետ մագաղթիլ : Անոնք սրտածառ կը բնտռեն իրենց  
 սիրտով բանակները այս խեղճ քաղաքիս վրայ արծա-  
 կելու , հոն , յաղթականի իրաւամբ հրամայելու և  
 սրբար սրատօնց երեւոյթներով հին օրէնքները բնա-  
 ընջելու :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Դուք ալ մարդ էք և կրնաք ձեր  
 կայսրնները գործածել , Աստուած օգնող է բաջկին :

ՄԹԱՌԻՖԱԽԵՐ . — Ո՛հ , Կերդրո՛ւտ , ստիպի  
 սրտուհաս մը և զարհուրելի պատիժ մ'է պատերազ-  
 մը , հօտը և հոյսը միանգամայն կը դարնէ :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Աստուծմէ եկածը համբերու-  
 թեամբ տանելու է մարդ , բայց վեհ սիրտ մը երբէք  
 անիրաւութեան չի համբերեր :

ՄԹԱՌԻՖԱԽԵՐ . — Գու կը սիրես այս տունը՞ զոր  
 մէք շինեցինք , բայց պատերազմը , ստեղծի սրտե-  
 րազմը՞ զանի մոխիր պիտի դարձնէ :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Եթէ զխոնայի , որ սիրտս այս  
 երկրային ստացուածոց կապուած է , ես իմ ձեռքս  
 կրաիլ կը բռնեցնէի դայն ու կ'ոյրբի :

ՄԹԱՌԻՖԱԽԵՐ . — Գթութեան կը հաւատա .  
 Պատերազմը օրօրոյն տկար մանկանց ալ չի խնայեր :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Անմեղութիւնը բարեկամ մը ու-  
 նի երկինց մէջ : Ետիք մի նայիր Վէրնէ՛ր , այլ ա-  
 ռաջքդ դարձաւ աչքերդ :

ՄԹԱՌԻՖԱԽԵՐ . — Մէք , մարդիքս , կրնամք  
 քաջութեամբ մեռնիլ պատերազմելով , բայց դուք . . .  
 Աւա՛ղ , ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը :

ԿԵՐԴՐՈՒՑ . — Ամենէն խեղճն ալ վերջին հնա-  
 րը կը գտնէ , այս կամուրջին վրայէն ելք օտանու՞  
 ես ալ կ'ազատիմ :

ՄԹԱՌԻՖԱԽԵՐ . — [Անոր թագիացը մէջ իցնալով]  
 Ա՛յն որ այսպիսի սիրտ մը կը սեղմէ իւր կուրծքի վրայ  
 կրնայ ուրախութեամբ պատերազմիլ իւր տանը՞ և  
 հայրենի գատտին համար , ստանց թագաւորաց զօ-  
 րութենէն վախնալու . . . Ահաւտոսիկ , հիմա՞ Ուրի կ'եր-  
 թամ , հոն հաւատարիմ բարեկամ մը ունիմ , Այլթհեր  
 Ֆարթիլը , նա զիս պիտի ընդունի . հոն պիտի զըս-  
 նեմ նաև՞ Աթէնկհատըզնի ազնուական պարօնը . . .  
 Թէպէտև մեծ և ազնուական ընտանիքի սերունդ է ,  
 սակայն կը պատուէ զժողովուրդը՝ և հնօրեայ բարե-  
 րը : Անոնց երկաթին հետ պիտի խորհրդակցիմ , թէ  
 ի՞նչպէս քաղաքիս թշնամեաց դէմ զնեղու է քաջու-  
 թեամբ . . . Մնաս բարեա՛ւ . . . իմ բացախցու-  
 թեանս միջոցին խահմութեամբ կուտալարէ մեր առ-  
 նը : Օգնէ առատարար Աստուծոյ տունը գացող ուխ-  
 տուորին՝ և բարեարտը վանականին որ իւր մենաս-  
 տանին համար հոնգաւակութիւն զայ խնդրել , տունդ  
 եկողները թող անկէ մխիթարեալ դուրս ելլեն :  
 Աթաուֆախիւրի առնը միշտ բաց է մեծ ձամբուն վրայ  
 և ասոյնջական հարկ մը բոլոր ուղեւորաց :

Դէպի ներս կերտան : Կոյն միշտիկ Կիչոս Թէր և  
 Պաուսիարթիկ ղեմին տաւաղապարիկ կ'ազան :


ՏՆՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԻ

ԿԻՅՈՒՄ ԹԻՂԼ ԵՒ ՊԱՌՈՒՄԿՈՐԹԷՆ . ԲԵ .

մին առաջակիրք :

ՍԹՈՒՑԱԽԻՐ ԵՒ ԿԷՐԳՐՈՒՑ . Ներածք :

ԹԻՂԼ . [ Պատմկարրէնին տառնց Սրաուֆախէրը տնու  
նկրտ ] : — Աւ այսուհետեւ ինն պէտք չունին : Մտիր  
պա առնը , Սթաուֆախէրի տառն է' և ինքը հայր ի վը-  
տառապէրայ է : [ Սրաուֆախէրը տնանկրտ ] : Բայց ա-  
հա ապի . . . նպն ինքն է . . . ետեւէս եկուր :  
[ Ղեպի Սրաուֆախէրին կ'կրբան , տնանկրտը կը փոխ-  
տի ] :



ՊԱՏՆԵՐ ԵՐՐՈՐԻ

ԱԼԹՕՐՅԻ ՄԷՉ ՀՐԱԳԱՐԱԿ ՄԸ

Նկրտը բարձր տեղ մը , կիսաշէն աւիաց մը , որուն  
նրեցած մասն շէնքին ընդհանուր մեք կը հաս-  
կըցուի • Ետեւի կողմը ընկցած և ճակատը շինուե-  
լու վրայ , ըստակիրտը դեռ դրած է , սրուն վր-  
այցին զարժանորք կ'կեննև ու կ'իյննև , շէնքին տա-  
նիքին վրայ յարկիչը : Անն մարդ շարժման մը  
նև և կ'աշխատին :

ՏՆՍԱՐԱՆ ԱՌՆԸՐՆ

ԳՈՐԾԱՎԱՐ , ԲԱՐՍԳՈՐԾ ,

ԳՈՐԾԱԻՈՐԲ ԵՒ ՀՈՂՍԿԻՐԲ :

ԳՈՐԾԱՎԱՐ . [ Չնայր գաւազան մը աշխատողները  
փութացուցանելով ] . — Այդչափ հանգստանալ պէտք  
չէ , աճապարեցէ՛ք , շուտ բրէք : Քար թերէք հա-  
կիր և չաղախ տուէ՛ք , դանկ կուտակայր եկած ժա-  
մանակ դորձը յառաջացած տեսնէ : [ ընթերթնև ] Որ-  
քան ալ երկարացա : [ Երկու հարակից որունք թե-  
մը կը թերնև ] : Այս տարածելիք բե՛ս է • Կրկնապատ-  
կեցէ՛ք դայն , Եղբերուն նման աշխատանքունն կէսը  
կը դադան :

ԱՌՆԸՐՆ ԳՈՐԾԱԻՈՐ . — Գտան է ինքնին կրել  
բռնադատուիլ այն քարերը՝ որոնցմով շինուելիք ամ-  
բոյը մեր բանտը պիտի ըլլայ :

ԳՈՐԾԱՎԱՐԸ . — Ի՞նչ կը մտնար : Գուհիի  
ճնունդներ : Միայն կովերը կթել և լերանց վրայ  
ծուլութեամբ պտտիլը գխտեն :

ԵՆԻ ԳՈՐԾԱՒՈՐ ՄԸ . — [Հանգչելով] Ա՛ւ ճարս  
հատու :

ԳՈՐԾԱՎԱՐԸ . — [Զանի մտնելով] Ա՛յ խառնէ՛ նա  
յիմ ձերսէկ , աչխառնէ՛ :

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՒՈՐ . — Գութ չ'ուելո՞ս դու ,  
որ աչխառնայնէ կ'ուտաս ընդունայն խեղճ ձեր մը՝ որ  
հազիւ կրնայ դաշել :

ՔԱՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԴՈՐԾԱՒՈՐՔ . — Վրէժխնդրու  
թիւն կը դռչէ այս վիճակը :

ԳՈՐԾԱՎԱՐԸ . — Գարբ ձեր գործը տեսէք : Ես  
իմ պարտաւորութիւնը կը կատարեմ :

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾԱՒՈՐ . — Գործավար , այս մեր  
չինած ամուսինն ի՞նչ անուն պիտի տան :

ԳՈՐԾԱՎԱՐԸ . — Ո՞րո՞ն չորստը պիտի կոչուի ,  
վասն զի այս լուծին տակ զձեզ պիտի նուաճեն :

ԳՈՐԾԱՒՈՐՔ . — [Խեղարով] Ուրին նուաճո՞ղ :

ԳՈՐԾԱՎԱՐ . — Է՛հ , ի՞նչ կայ այդքան խըն  
դալու :

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾԱՒՈՐ . — Այս տնակով Ուրին  
պիտի նուաճէք :

Ա. ԳՈՐԾԱՒՈՐ . — Տեսէ՛ք , այս խորղի հողակոյ  
տին պէս քանի՞ հատ իրարու վրայ դնելու է , որ  
Ուրի լերանց սակնախորրին չափ բարձրութիւն մը  
ունենայ : (Գորխախորը դէպի ներս կ'որոտայ) :

ՔԱՐԱԳՈՐԾԸ . — Այս անիծեալ շէնրին ծոռա  
յոշ մուրճ լին ամենէն խոր տեղը պիտի նետեմ :

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

#### ՆՈՅՆՔ, ԹԷՂԼ ԵՒ ՍԹԱՌԻՑԱԽԵՐ

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Ո՛հ , ինչո՞ւ աչխարհ էկոյ  
թիէ այս բաները պիտի տեսնէի :

ԹԷՂԼ . — Հոս կենալնիս աղէկ չ' , տեղի էե  
առն երթամք :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Ուրի նահանգին մէջ չ'ե՞մ ,  
աղատութեան քաղաքին մէջ :

ՔԱՐԱԳՈՐԾԸ . — Ո՛հ պարոն , եթէ բերդին տակ  
չինուած մթին բանտերը տեսնէիք : Հոն բնակողը ա  
քաղաղին ձայնն անգամ չի լսեր :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Ո՛հ , Աստուած իմ :

ՔԱՐԱԳՈՐԾԸ . — Տեսէ՛ք սա պտտերը , տեսէ՛ք  
սա աղեղաձև երկաթները , որոնք շէնրը բռնած են ,  
այս բոլորը կարծես յալխտան միալու համար շին  
ուած են :

ԹԷՂԼ . — Բազուկներով շինուածը բազուկնե  
րով կրնայ կործանիլ , [Լևոր ցոյց տալով] : Ահա ա  
սիկ աղատութեան բնակարանը որ Աստուած մեզ հա  
մար կերտեց :

Թմարկի ձայն մը կ'իկնացոյի : Ինչ մը մարդիք ցո  
ղի վրայ անցուցած վերջոր մը կը շնորհն , ստաշ  
նուն մտնեալի մը : Կանանց և մանկանց խառն թ  
խառն քաղաքիս մը նուաճուն կ'ուզան :

ՏՆՏԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

ՆՈՅՆՔ, ՄՈՒՆԵՏԻԿ, ՀՆՏԱԳԱՅՔ,  
ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՆՑ

Ա. ԳՈՐԾԱՒՈՐ. — Մտիկ ըրէք, ի՞նչ կը նշա-  
հտիկ այս թմբուկը :

ՔԱՐԱԳՈՐԾԸ. — Ի՞նչ ծաղրելի տեսարան : Ի՞նչ  
կը նշանակէ այս փեղցրը :

ՄՈՒՆԵՏԻԿ. — Մտիկ ըրէք, յ՛անուն կայսեր :

ԳՈՐԾԱՒՈՐԳ. — Լուսթիւն : Մտիկ ըրէք :

ՄՈՒՆԵՏԻԿ. — Կը տեսնէ՞ք այս փեղցրը, ՔԸ-  
նակիչքդ Ուրիկ : Ատի հիմա Ալթօրֆ քաղաքի մէջ  
բարձր սիւնի մը վրայ պիտի զրուի, և կուսակալին  
կամքն ու հրամանը այս է որ, ինչպէս ամեն մարդ  
զինքը կը մեծարեն՝ նոյնպէս պիտի յարգեն այս փե-  
ղցրը : Պիտի ողջունեն գանի ծուեր ՚ի գետին և մեր-  
կազուի . . . Ատվ կայսրը իւր հարատակաց հնա-  
զանդութիւնը պիտի ճանչնայ : Ով որ այս հրամանին  
չէ՛մ զործէ թէ ինչքէն և թէ հոգիէն պիտի զրկուի :

Բարդ ժողովուրդը բարձրաձայն կը ծիխալի, դոր-  
բիւն բերիկ : Մտնտիկը, հետագայք և յարդ ծո-  
ղովուրդը կը մկկին :

ՏՆՏԱՐԱՆ ԶՈՐԲՈՐԳ

ԹՂԼԼ, ՍԹԱՌԻՑԱՒԷՐ, ՔՍՐԱԳՈՐԾ,  
ԳՈՐԾԱՒՈՐԳ, ՀՈՂԱԿԻՐԳ, ԵՆԿՈՐ  
ԳՈՐԾԱՎԱՐԸ :

Ա. ԳՈՐԾԱՒՈՐ. — Աշխարհիս վրայ չի լուսած-  
բան մը երեւակացեր է կուսակալը : Փեղցր մը մեղի  
ողջունել տա՛լ : Ըսէք, լուսած բան է այս :

ՔԱՐԱԳՈՐԾ. — Մէք, ՚ի ծուեր իջեալ փեղց-  
րի մը ատա՛լ : Պարկեշտ և ծանրաբարոյ մարդիկը  
զատեր հետերնին խողալ կ'ուզէ :

Ա. ԳՈՐԾԱՒՈՐ. — Գոնէ կայսերական թաղը  
ըլար : Յայց այս Աւստրիոյ դրասկան փեղցրն է,  
գահին վրայ կաղրած տեսաց զայն հոն ուր կալուած-  
ներ սովոր են բաշխել :

ՔԱՐԱԳՈՐԾԸ. — Աւստրիոյ փեղցրը : Ըտեցէ՛ք,  
ատիկոյ որոգայթ մ'ի վնեղ Աւստրիոյ դերի ընկը :

ԳՈՐԾԱՒՈՐԳ. — Պարկեշտ մարդը այսպիսի նա-  
խատանոց չի համբերեր :

ՔԱՐԱԳՈՐԾ. — Եկէ՛ք, երթամք միւսներուն  
հետ խորհրդակցիմք ասոր վրայ : [Մէկ քանի գրծա-  
ւարաց հնա կը մկկի :

ՏԵՍԵՐԱՆ ՀԻՆՆԵՐՈՐԳ

ԹԵՂԼ, ՍԹԱՌԻՑԱԽԵՐ : Ներսէս,  
ԳՈՐԾՍՎԱՐԸ Գործատրեկերը հսկերսլ :

ԹԵՂԼ. — [Սրատփախերիկն] : Հիմա ինչ ընեւ  
լիքնիւք զիտէք : Մնայք բարեանւ, Պ. Վերնէր :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Ո՞ւր կ'երթարք : Ո՛հ այդքան  
չուտով մի մեկնիւք :

ԹԵՂԼ. — Ընտանիքս անտէր մնայած է սո՛ժմ :  
Մնայք բարեանւ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Սիրտս բոլորովին ձեզի բաց  
ուելու պիտք ունի :

ԹԵՂԼ. — Վչտոյլի սիրտ մը՝ խօսքերով չի  
մխիթարուիր :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Բայց խօսքերը կրնան զլեզ  
գործելու տանիլ :

ԹԵՂԼ. — Հիմաիւ հիմա եթէ ընելիք մը կո՛յ,  
այն ալ համիւրեւել և լռելն է :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Միթէ պէտք է կրե՞լ ինչ  
որ անտանելի է :

ԹԵՂԼ. — Բռնաւոր թագաւորաց թագաւորու  
թիւնը խիտ կարճատև կ'ըլլայ : Երբ փոթորիկը կըս  
կըսի կրտիկերը կը մարեն [1] նուերը խուճապելով

[1] Հերկետոյ մէջ, արեւելեան հիւսիսի հողքը  
այնչափ սաստիկ կը փչէ, որ բոլոր տուներու մէջ  
կրտիկերը կը մարեն :

Նաւատորմիդը կը մանեն և կատարի հողմոց ջնջումը  
երկրիս վրայէն կ'անցնի առանց չարիք մը ընելու՝ կամ  
հետք մը ձգելու : Ս,մեն մարդ տանը մէջ փակեալ կը  
մնայ : Խաղաղասէր մարդկանց շուտով խաղաղութիւն  
կը սրարդեալի :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Այնպէ՞ս կը կարծէք :

ԹԵՂԼ. — Ի՞ժը, մինչև որ իրեն չի դպչին չի  
խայթէր : Երբ անոնք բոլոր քաղաքը հանդարտ և  
անտարբեր վիճակի մէջ տեսնեն, ինքնիրեննուն պի  
տի ձանձրանան :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Եթէ միանայինք շատ բաներ  
կրնայինք ընել :

ԹԵՂԼ. — Նուարեկութեան մէջ երբ մարդ  
մինակ ըլլաց աւելի դիւրաւ կազատի :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Հասարակաց օգուտը չէ՞ք  
ուզեր :

ԹԵՂԼ. — Մարդս միմիայն ինքն իր վրայ կրնայ  
վստահիլ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Միութիւնը՝ ամենատիրանե  
րը անգամ կը զօրայնէ :

ԹԵՂԼ. — Զօրաւոր մարդը՝ մինակ եղած ատեն  
աւելի ուժ ունի :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Ուրեմն հայրենիք չի՞ պիտի  
կրնայ բեզի ապաւինիլ երբ յուսահատութիւնը 'ի դէն  
հրաւիրէ դայն :

ԹԵՂԼ. [ձեռքը ակոբ տարալ,] — Կիցում ԹԵՂԼ,  
որ անշունչին մէջ կորուսեալ գառ մը կալատէ :

պիտի զլանա՞յ օգնել իւր բարեկամաց : Ինչ որ ալ  
 ըլլայ ձեր դիտաւորութիւնը՝ հասկցուցէք ինձ զայն :  
 Երկար բարակ խորհուրդներէ՝ և պատրաստութիւններէ  
 ընչ չեմ ախորժիր , երբ գործերու ժամանակը զայ և  
 ինձ պէտք ունենաք կանչեցէք թէլլը՝ և պիտի տես-  
 նէք ձեր մէջը : [ Տարբեր կողմերէ կը մնկնին : ] Կատա-  
 կեցաիւն բոլորտիքը յանկարժ յազմարիւն մը կերեկաց : ]

**ՏԵՍԱԲՆ ՎԵՅԵՐՈՐԴ**

**ԳՈՐԾԱԻՈՐՔ** , ներք յատասկերտին  
 բոլորտիքը կը յուզին : **ԳՈՐԾԱՎԱՐԸ**  
 իսպառնական մէջ : Քիչ մը տեղին **ԳԱՐԱԳՈՐԾԸ**  
 յետոյ **ՊԷՐԹՅԱ ՏԸ ՊՐՈՒՆԷՔ** և իւր հետազոյրը :

**ԳԱՐԱԳՈՐԾԸ** . [ վագերով դէպ ի ամբողջ կերպայ ] :  
 — Ի՞նչ կայ :


**Ա . ԳՈՐԾԱԻՈՐ** , [ իսպառնական մէջէն պոսարու  
 կերակ ] . — Յարկիչը շէնքին վրայէն ինկաւ :

**ՊԷՐԹՅԱ** . [ վագերով ] . — Մեռա՞ւ , վաղեցէ՛ք .  
 տղատեցէ՛ք զինքը . . . Օգնութեան հասէ՛ք . . .  
 Ի՛րեն օգնօղին . . . Ահա՛ւատիկ ոսկի : [ Այս ըսելով  
 Պիտրոյ Պէրրիսա իւր վրայ տրամ գոնարները ժողովարդիւն  
 կը նետէ : ]

**ԳԱՐԱԳՈՐԾԸ** . — Ձեր ոսկիովը . . . Ոսկիով ա-  
 մեն բոն ունենալ կը կարծէք , երբ հոյրը իւր զօ-  
 ւակներէն և ամուսինը իւր կնոջմէն յախշատկեցիր ,  
 երբ աշխարհ հեծութեամբ լցուցիք , կը կարծէք որ

միշտ ամենը մոռցնել տար ձեր ոսկիովը . . . Դուք  
 չեկամ աւելի երջանիկ էինք : Յուսահատութիւնը ձեր  
 հետը բերիք հոս :

**ՊԷՐԹՅԱ** . [ Գործավարին որ կուգայ ] — Ո՞ղջ է :  
 Գործավարը ժողովական նշան մը կ'ընէ : ] Ո՛հ անիծ-  
 եալ ամբողջ : Անէճքներով շինուեցաւ և անէճքներ  
 պիտի բնակին , ըսելով կը մնկնի :



նառու ըլլայիք փոխարէն պատիժը կրելու որչափ որ ալ խիստ ըլլար :

**ՄԵԼՔԹՆԱԼ .** — Միթէ այդ լիրբին անարգ այ- պանացը համբերելու էի : « Եթէ քաղաքայիք հաց ուտել կուզեն , իրենք թո՛ղ քաչեն արօրը » : Դժուար ըս եկաւ , երբ տեսայ այս սպասաւորը՝ լմ՝ ընտիր եզերս արօրէն լուծեց . խեղճ կենդանիները վշտագին կը բառանչէին , կարծես իրենց եղած նախատինքը ի- մանալով , եղջերոյ հարուածներ կուտային . ես աչ արդար բարկութեամբ մը լեցուեցայ . ինքզինքէս դուրս ելլալով կուսակալին կողմանէ եկած մարդուն զարկի :

**Վ. ՖՈՒՐՍՈՒ .** [Ինքնիշխան] . — Աւա՛ղ : Մենք որ ծեր եմք և հաղու կընամք մեր բարկութիւնը չափաւորել , ի՞նչպէս երիտասարդութիւնը պիտի կարենայ զինքը զսպել :

**ՄԵԼՔԹՆԱԼ .** — Միմայն հայրս կը մտածեմ . . . Խնամոց կը կարօտի և որդին իւր քովը չէ՛ : Կուսակալը զինքը կ'առի , որովհետեւ արգարութեամբ կը մրցի նա ազատութեան և իրաւանց համար : Նաե կը նեղեն խեղճ ծերուկը , մէկը չի կայ որ զինքը պաշտպանէ հարստահարութեան դէմ : Ինչ որ աչ գլխուս գայ ես երթալու եմ :

**Վ. ՖՈՒՐՍՈՒ .** — Սպասէ և համբերէ՛ մինչև ո՞ր Ունթէրվալտէն լուր մը առնեմք , [Գուռը կը զարնեն] : Գուռը կը զարնեն , զնայ . . . Հաւանականաբար կուսակալի մարդոյմէ մէկը պիտի ըլլայ . . . ներս զնայ . . . Ուրի նահանգին մէջն ես հո՛ս , ո՛ւր Լանտենպէրի բազուկը կընայ հասնիլ , քանզի բռնաւորք իբարու ձեռնառու կըլլան :

**ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐ**

**ԱԹԷՆԿԱՌԻՉԻՆԻ ՄԷՉ ՎԱԼԹՆԻՐ  
ՖՈՒՐՍՈՒԻ ՏՈՒՆԸ :**

**ՏԵՍՏԱՆ ԱՌԱՋԻՆ**

**ՎԱԼԹՆԻՐ ՖՈՒՐՍՈՒ ԵՒ ԱՐՆՈՒՏ ՏԸ  
ՄԵԼՔԹՆԱԼ .**

Թատերարևմին զանազան կողմերէն երկուքնիկ կը մտնեն

**ՄԵԼՔԹՆԱԼ .** — Պարոն Վալթնէր ֆուրսթ . . .

**Վ. ՖՈՒՐՍՈՒ .** — Եթէ յանկարծ մէկը վրայ հասնի : Եղած տեղը կեցիր , լրտեսներէ՛ չըջապատեալ եմք :

**ՄԵԼՔԹՆԱԼ .** — Ունթէրվալտէն լուր մը չէ՞ք բերեր ինձ : Հօրմէս : Ա՛լ չի պիտի կընամ՝ կենալ հո՛ս անգործ իրրև բանտարկեալ : Ի՞նչ , մեծ մե՞ղք մը դործեցի , որ իրրև մարդասպան պիտի սրահուըտիմ : Թպիրէ սպասաւոր մը կուսակալին հրամանաւ կուզեր առնել և տանել աչացս առաջ՝ ցուրդս և գեղեցիկ զոյց մը եզերս , ես ալ զաւազանի հարուածով մը իւր մատը կտարեցի :

**Վ. ՖՈՒՐՍՈՒ .** — Բաց շատ խիստ վարուեր էք : Կուսակալին կողմանէ խրկուած մէկն է նա , ձեր մեծաւորին սպասաւորը . յանցաւոր էլք՝ պէտք էր յանձ .

ՄԵԼԻՔՈՂԱՆ . — Մեր ընելիքը մեզի կը սուղրեն ջընեն :

Վ. ՅՈՒՐՍԹ . — Գնայ , եթէ քեզի համար ապահովութիւն մը ըլլայ՝ զբեղ կը կանչեմ : [Մէրրհաշ կ'մեկնի] :

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Վ. ՅՈՒՐՍԹ . — Խեղճը , չեմ համարձակիր ըսել իրեն իմ դուշակածս . . . [Գուռը կը գարնեն] : Ո՞վ է դուռը դարնօղը . . . ամեն անգամ որ դուռը իւր ծղկանքին վրայ կը կրճատ՝ վերջապէս դուան ձայնը իմանաղուս սլէս , դժբախտ լուր մը կ'իմանամ : Ամեն տեղ մատնութիւն և կասկած կոյ . իշխաւնայ կողմանէ խրկուած լրտեսները՝ մինչև տուներուն մէջ կը մտնեն , եթէ ոչսսլէս շարունակուի , ամեն դուռներուն յախանքներ և նիգեր դամել հարկ պիտի ըլլայ :

Գուռը բանալ կերբայ , զտոմսցմամբ ետ կը քաշուի երբ վէրնէր Սրաուֆախէրի ներս մտնելը կը տեսնէ :

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Վ. ՅՈՒՐՍԹ , ՍԹԱՌԻՑԱԽԵՒՅՐ .

Վ. ՅՈՒՐՍԹ . — Ի՞նչ կը տեսնեմ , դո՞ւք՝ Գառն վէրնէր : Ահաւասիկ Աստուծմէ՛ եղաւ , սիրելի և արժանի հիւր մը . . . Զենէ աղէկ մէկը սյս սեւաճ

քէս չտնցաւ : Արեթն երկոյս անդամ բարի եկար իմ տունը : Ի՞նչ բան արդեօք պատճառ եղաւ զձեզ հօս բերելու , հո՛ս Աւրիի մէջ ի՞նչ կը բնտոէք :

ՍԹԱՌԻՑԱԽԵՒՅՐ . [Չուրբ անոր երկնցնկոյ] . — Հին ժամանակը և նախնի Հեղիւտիան բնտոել եկայ :

Վ. ՅՈՒՐՍԹ . — Պո՛ւք ձեր հետը կը բերէք գանձը . . . Տեսէ՛ք , խիտ երջանիկ եմ , զձեզ տեսնելով սիրտս կը տաքնայ . . . Նստեցէ՛ք . Գ . Վէրնէր . . . Ի՞նչպէս է Տիկին Աթիթուտը , ձեր Ազնիւ կինը . ամենատարժանի դուստր իմաստունին Խպէրիկ : Բոլոր այն ճանապարհորդները , որք Ալլըմանեպէն Խապիա երթալու համար , Սուրբ Մէյնարտի տաճարին կանցնին կը գովեն ձեր հիւրնկալ տունը . . . Բայց ըսէ՛ք ուղղակի Տրուէլէ՞ն կուգար : Բան մը աչքերնուդ չի գարկա՞ւ հօս գալէ առաջ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՒՅՐ , [նստելով] — Նորասեսիլ բան մը տեսայ որուն վրայ կաշխատէին , զոր ինձ աղէկ չ'երեցաւ :

Վ. ՅՈՒՐՍԹ . — Ո՞վ բարեկամը իմ , այդ տեսածնիդ ամեն բան հասկցած էք :

ՍԹԱՌԻՑԱԽԵՒՅՐ . — Աւրիի նահանգին մէջ աւտոր նման բան մը տեսնուած չէ՛ . . . Մարդու մարկն չ'էր անցնէր որ հօս ամբողջ շինուած ըլլայ , հո՛ս երբէք չ'իկար գոց բնակարան բացի գերեզմանին :

Վ. ՅՈՒՐՍԹ . — Աղատութեան գերեզման է : Յիշտ անունը տուիր :

ՍԹԱՌԻՑԱԽԵՒՅՐ . — Պ . Վ . Կարէր Ծուրսթ , չ'եմ

ուզեր որ ժամանակնիդ ոչինչ տեղը անցնի . ունայն հետարբերութիւն մը չի որ հոս եկայ : այլ ծանրազին շահեր զիս ձեր տունը բերին : Քշուառութիւնը իմ տունը թողուցի , բայց հոս ալ կը գտնեմ զայն : Քանզի մեր կրած նեղութիւնները քաշուելիք բաներ չեն , և այս թշուառութեան վերջը չ'եմ տեսներ : Ի վաղուց անտի Հելլետիացիք աղատ էին և բոլոր մարդիկ մեզի հետ աղէկ կը վարուէին : Երբէք այսպիսի վիճակ մը ունեցած չ'իք այս քաղաքը , այն օրէն ի վեր' որ հովիւք ըրան վրայ իրենց հօտը լի'աբստիկն :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Այո , կուսակալաց ընթացքը տարօրինակ է : Աթէնէհաուզէնի պարօնը որ հին ժամանակները զիտէ , ինքն ալ կըսէ թէ՛ տաի երկար ժամանակ չի քաշուիր :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Անդին ալ Ռենթերվալտի մէջ՝ ամեն բան զէշ ընթացքի մէջ է և արեամբ կը վերջանայ . . . ՎՕՐՔընչից , կայսեր կուսակալը , որ Քօզպէրիկի մէջ էր , արգիլուած պողոյն ցանկացաւ , յանդգնութեամբ ուզեց զեղծանել Պառակարթիէնի հինը , որ Ալքիլէն կը բնակի , Պառակարթիէն ալ զայն սպաննեց կացնի հարուածով մը :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Ո՛հ , Սատուծոյ դատատանը արդար է . Պառակարթիէնը ըսիք : Քաջ մարդ մ'է , բայց ողբօտ է այժմ և ապահօ՞վ է իւր վիճակը :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Ձեր բեասն զինքը ընէն անցուց , ես ալ զանի տունս պահեցի , Շթէյնիկի մէջ . . . նոյն անձը որիչ բան մ'ալ պատուեց ինձ որնոր Սարնէնի մէջ պատահած է , աւելի ստակալի : Բոլոր

բարեպաշտ մարդիք եթէ խմանան շարտերնին արիւն պիտի դալէ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — [Մտադրոսկանք] Ըսէք նայիմ , ի՞նչ է :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Մէջի ձորին մէջ , այն տեղը՝ ուր Քէրնտէն կը մտնուի , հոն ճշմարտասէր և արդար մէկը կայ՝ որնոր Հէնրի Տը Լու Հալտ կը կոչեն և որուն խօսքը ժողովրդներուն մէջ կ'անցնի :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Ձինքը ո՞վ չի ճանչնար : Ի՞նչ եղաւ իրեն : Եւտով լինուցեք :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Լանտէնպէրկի , փոքր յանդանքի մը համար անոր որդին պատժել ուզելով , հըրամայեց որ իրեն ամենագեղեցիկ եղբերն զայգ մը՝ տրօրէն հանեն , այն ժամանակ Հէնրիին որդին ալ զարկաւ կուսակալին ծառան և փախաւ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — [Դեկի անցկարեանք] Բայց հա՞յրը . . . ըսէք տեսնեմ ի՞նչ եղաւ :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — Լանտէնպէրկի հոյքը բերել տուաւ , հըրամայեց որ իւր որդին իրեն յանձնէ , խեղճ ծերուկը կ'երգնուր որ փախստականէն երբէք տեղեկութիւն մը չ'ունի , ճշմարիտն ալ այնպէս էր , այն ժամանակ կուսակալը զահիճները կանչել տուաւ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — [Մէկէն ի մէկ ոտքի ելլալով և Սրաուֆախէրը տեսարակն միտ կարնք տակի ուզելով] : Ո՛հ լաութիւն . . . լէյնէք :

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ. — [Դեկի քարճրածայն] Կուսաւիալը ըսաւ թէ՛ «Եթէ զուսուկ ինչ փախաւ դու իմ

Տեսքս ես . . . Զանի գետինը պատկեցնել տարով,  
իւր աչացը մէջ սայրասուր երկաթ մը մխել առեաւ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — [Զարնացմանը] Ո՛վ երկի՛նք :

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՈՐԴ

ՆՈՅՆՔ, ՄԵԼԻՔԹՆԱԼ

իսկին վրայ վազելով :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — Աչքերուն մէջ ըսիր :

ՍԹԱՌԻՖԱՆԻԵՐ. — [Զարնացմանը երիտասարդը  
ցոյց տարով] Ո՛վ է այս երիտասարդը :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — [Մրտավարիներէ թնր ուժգին  
բռնելով] Աչքերուն մէջ : Պատասխանեցէ՛ր :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Ա՛հ, թշուա՛ւը :

ՍԹԱՌԻՖԱՆԻԵՐ. — Ո՛վ է այս. [Վարքներ ֆորսք  
իրեն նշան կրնէ թէ՛ պատուա՛ւ մարդուն որդին է] : Իւր  
որդի՛ն, Ստուած ի՛մ :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — Եւ պէտք է որ հետի ըլլամ իր-  
մէ . . . երկու՞ աչացը մէջ ալ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Հո՛մբերէ՛ ինչպէս որ վայելէ  
մարդու մը :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — Յանցանքը իմն է . . . ես կի  
յանցաւորը, կոյր ուրեմն, բոլորովին կոյր. կոյր է :

ՍԹԱՌԻՖԱՆԻԵՐ. — Ըսած նուզ պէս է : Տեսու-

զաթեան աղբիւրը բոլորովին ցամաքած է : Ստէէ վեր,  
ըն արեգական լոյսը չի պիտի կարենայ տեսնել :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Խնայեցէ՛ք ցաւոցը :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — Երբէ՛ք ինչ երբէ՛ք : [Զնոքք  
աչքերուն վրայ կը դնէ և մէկ քանի վայրկեան շուկէ  
վերջը՝ գուռի վեր վերցնելով մէկ մը մէկուն՝ մէկ մը  
միւսին վրայ կը պտտցնէ իւր աչքերը. մտք և հնկնկալի  
ձայնով մը կրսէ] : Ո՛հ, Ստուածային ընտիր սարգէ  
մ՛է աչաց լոյսը . . . Բոլոր արարածք լուսով և եր-  
ջանկութեամբ կապրին . . . Տունկերը անգամ ու-  
րախութեամբ դէպի արեգական կը դառնան : Իսկ ին-  
քը, յաւիտեան մթութեան մէջ խարխարելով պիտի  
երթայ . . . Մարգարեւորներուն տակ դաւարիկները,  
ծաղկանց գոյները զինքը ալ չի պիտի կենդանայնեն  
. . . Ալ չի պիտի կրնայ դիտել Ստանակուտոց վար-  
դագոյն գազաթները . . . Մեանիլը բան մը չէ . . .  
բայց ապրիլ և չի տեսնել, ահա տոտապանքը . . .  
Ինչո՞ւ ինձ այդքան խանդաղատութեամբ կը նայիք :  
Երկու հատ աչքեր ունի՛մ և անոնցմէ մէկն ալ կոյր  
հորս տալու կարող չեմ, ոչ ալ նշըլ մը այս փայլուն  
լուսոյ ովկիանոսէն. որ իմ աչքերը կը շարունայնէ :

ՍԹԱՌԻՖԱՆԻԵՐ. — Աւա՛ղ, զքեզ միտիթ արեւու  
տեղ՝ ցաւերդ աւելցնել կը տարախիմ . . . կուսակալը  
աւելի դէշ բան մ՛ալ ըրու, իւր բոլոր ունեցածը կո-  
զոպաւելով՝ միայն գաւազան մը թողուց իրեն որ գա-  
լէ և դուռնէ դուռ երթայ թշուաւ կոյրը մտրալու :

ՄԵԼԻՔԹՆԱԼ. — Գաւազան մը միայն խեղճ ծեր  
կոյրի՛ն : Ամեն բանէ կազոպեալ՝ արեգական լոյսէն  
ալ, որ թշուաւայ տարուստն է և ամենուն համար

կը ծագի . . . Հիմա՛ ալ, ինձ կենայրու և սրահուելու  
 խօսք մի ընէք : Ի՞նչ վատ եմ, հայր իմ, որ փոխա-  
 նակ քու ապահովութեան հոգ տանելու ինքզինքս մը  
 տածեցի . . . Քու ամենասիրելի գլուխդ բռնաւորին  
 ձեռայրը մէջ գրաւ թողուցի : Մէկդի՛ գայե՛ք վատ ըլլ-  
 գուշութիւնք . . . ալ տակէ վերջը միայն արիւնային  
 վիշտիւնդրութիւն մ'ի՛նք իմ մտածմունքը : Պիտի եր-  
 թամ . . . և ոչ բան մը զիս չ'արդիւկեր . . . սխտի  
 երթամ և հօրս աչքերը սխտի ուղեմ կուսակալին . . .  
 Իւր թիկնապահայ մէջտեղ սխտի երթամ գտնեմ զին-  
 քը . . . Ի՞նչ ընեմ՝ կեանքը՝ եթէ իւր արեան մէջ  
 չի կարենամ պաղէցնել իմ հրաբորոք սոսկալի ցաւս :  
 [ կրրալ կազէ ] :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Կեցիր, ի՞նչ կրնաս ընել իրեն ,  
 Սարսիկնի մէջ է , իւր բարձր ամրոցին մէջ , և հոն  
 ասարկնուած է՝ ծաղր կընէ այժմ անկարօղ զայրոյթ  
 մը :

ՄԵԼՔԹՆԱԼ. — Եթէ Երկխօրնի լեռան գաղա-  
 թըն ալ ըլլայ և կամ աւելի բարձր հոն , ուր Եռնի-  
 Ջրատ. (1) յախտենից ի վեր նստած է . . . կրնամ  
 ինձ ճանապարհ մը բանալ մինչև իրեն քով . ինձ  
 նման քսան անյողդողդ երկտասարդներով իւր բարձր  
 ամրոցը սխտի տապալեմ : Եւ եթէ ոչ որ ինձ հե-  
 տեկը ուզէ և դուք ամենքնիդ , ձեր խրճիթներուն և  
 երամաց համար ա՛հ ու դողով բռնութեան լուծին տակ  
 մտնէք . . . Բոլոր լեռան հովիւներուն ձայն սխտի

(1) կոյս : Պէրնի նահանգին բարձր մէկ լեռան  
 անունն է նոյնպէս ալ Թրևիտրն : (Երկխօրն կը նշանա-  
 կէ նաև եղջիւր ահաւոր) :

տամ և հոն երկնից ազատ կամարներուն տակ , ուր  
 միտքը դեռ առայդ է և մաքուր և սիրտը առողջ ,  
 սխտի պատմեմ այս գաղտնային անցթութիւնը :

ՍԹԱՒՈՖԱԵԻՐ. — [Վ. Ֆուրսթին]. Բռնութիւնը  
 իւր վերջին ծայրը հասաւ . . . Ասկէ ոնդին սխտի  
 սպասե՛մք . . .

ՄԵԼՔԹՆԱԼ. — Ա.Լ ի՞նչ մնաց վախնալու մեզ  
 համար , քանի որ ակնակապիճի մէջ՝ բիբն ալ ապահով  
 չէ : Միթէ ինքզինքնիս պաշտպանելու անկարօ՞ղ եմք :  
 Ինչո՞ւ ուրեմն սովորեցանք աղեղ քաշել և կայլն գոր-  
 ծածել : Ամեն մէկ արարածոց՝ իրենց յուսահատ վըշ-  
 տայրը վայրկեաններուն մէջ , ինքզինքնին պաշտպանե-  
 լու համար մէկ մէկ զէնք տրուած է : Պարտասեալ  
 եղջերուն կանգ կառնու և իւր սոսկալի եղջիւրները  
 շանց ջոկին դէմ կը դարձնէ , լեռնայժը՝ որսորդը մին-  
 չև անդունդները կը ձգէ . . . Արօրատէր եղը ան-  
 դամ , մարդուս հանդարտ ընկերը՝ որուն ամենազօ-  
 րեղ վիզը լուծոյն տակ համբերութեամբ կը ծօի , երբ  
 զինքը զայրացնեն կ'ոսանու , իւր ահեղ եղջիւրները  
 կը սրէ և իւր թշնամին մինչ ի ամպերը կը նետէ :

Վ. ՖՈՒՐՍԹ. — Եթէ երեք նահանգաց բնակիչ-  
 ները մեր երեքին նման խորհին , այն ժամանակ կա-  
 բելի է բան մը ընեմք :

ՍԹԱՒՈՖԱԵԻՐ. — Ուրի թող կանչէ և Ունթէր-  
 վալտ պատասխանէ , այն ժամանակ Եռեցնալ հընօր-  
 եայ միաբանութիւնը սխտի պատուէ :

ՄԵԼՔԹՆԱԼ. — Ունթէրվալտի մէջ շատ բարե-  
 կամներ ունիմ՝ ամեն մէկերնին , եթէ ուրիշ մը ի-  
 րենց պաշտպան կանգնի , ամենայն ուրախութեամբ

կեանքերնին վտանգի կը դնեն . . . Ո՛վ դուք, բարե-  
պաշտ հարք գաւառիս, երիտասարդ մ'եմ ես ձեր  
երկուրքն մէջ տեղ, մ'վ փորձառու մարդիկներ . . .  
Հասարակաց օգտին վերաբերեալ ժողովոց մէջ ձայն  
չ'ունենալ կը պարտաւորիմ: Երիտասարդութեանս և  
անմտութեանս նայելով իմ խորհուրդները և խօսքերը  
մի արհամարհէք, երիտասարդութեան եռանդը չէ որ  
զիս կը դրդէ, այլ ամենախորին և ամենատարաստիեւի  
կսկիծ մը, կսկիծ մը, որ ժայռերը անգամ կը շարժէ:  
Հայր էք դուք ալ, գլուխ ընտանեաց, երջանիկ էք,  
քանդի տաքինի զաւակ մը ձեր սպիտակ և մեծար-  
գոյ սլիքը կը յարգէ, և ձեր աչացը ըրբին վրայ բա-  
րեպաշտաբար կը հսկէ: Ո՛հ թէպէտ և ձեր կենացը  
մէջ վիշտ մը կրած և ստացուածոց մէջ դէն մը ըրած  
չէք տակաւին, ձեր աչքերը դեռ մարտը և յատկ  
կը դառնան իրենց ականակապճաց մէջ, բայց սակայն  
դուք ալ ինէ սրահաս վշտալի չէք: Սմբարշտին դա-  
շոյնը ձեր գլխուն վրայ ալ կախուած է. Աւստրիոյ  
Թշնամի եղաք, հօրս յանցանքն ալ ուրիշ բան մը չէր,  
դուք ալ իրեն սէս յանցաւոր և դատասպարտելի էք:

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — [Վ. Ֆուրքիկ]. Որոշեցէք:  
պատրաստ եմ ձեզի հետեւելու:

Վ. ՖՈՒՐՍԹ . — Սկիւնէի և Աթէնհասուղէի  
աղնուական իշխաններուն խորհուրդ հարցնեմք . . .  
Իրենց անունը. ըստ իս, մեզի բաւական բարեկամներ  
պիտի ստայնէ:

ՄԵԼՔԹՆԱԼ . — Ո՛ր պիտի գտնեմք մեր լեքանց  
մէջ ձեր անուններէն աւելի սրատուաւոր անուն մը:  
Ձեր անունները ժողովրդեան համար ոսկիէն ավելի են:  
Ձեր հայրերը հարուստ առարկնութիւններ ձեզի քա-

ւանդ թողուցած են, և դուք նոյն առաքինութիւն  
ները բողոքապահած էք . . . Ի՞նչ պէտք ունիմք  
աղնուականաց, մինակ գործեմք: Եթէ մեք երեքնիս  
քաղաքին մէջ մինակ անգամ ըլլամք, ինձ այնպէս  
կերենայ որ, պիտի կարօշ ըլլամք ինքզինքնիս պաշա-  
պանելու:

ՍԹԱՌԻՑԱԽԵՐ . — Աղնուականաց վիշտերը մեք  
վիշտերուն չեն նմանիր, ձորերուն մէջ եղած վտթո-  
րիկը դեռ բորձրերը հասած չէ . . . Սյուս ամե-  
նայնիւ, երբ տեսնեն որ բոլոր քաղաքը դէնք առած  
է իրենք ալ անշուշտ պիտի օգնեն:

Վ. ՖՈՒՐՍԹ . — Եթէ Աւստրիոյ և մեր մէջը  
իրաւարար մը գտնուէր, իրաւունքը և օրէնքը կրնա-  
յին որոշուիլ, բայց այն որ սոսոր զմեզ կը հարստա-  
հարէ մեր կոյսրը և միանգամայն դատաւորն է . . .  
Պէտք է ուրեմն որ Ստաուած մեզի օգնէ մեր յա-  
տուկ բարեկներովը . . . [Յրատաֆայիտիկ]: Գո՛ւ  
Շուիճի բնակիչները քննելու գնաց, ես ալ Ուրի մէջ  
բարեկամներս կերթամ ժողովել, բայց Ունթերվալտ  
մ'վ պիտի խրկեմք . . .

ՄԵԼՔԹՆԱԼ . — Ձիս . . . Սյս ձեռնարկու-  
թիւնը ինէ աւելի որո՞ւ կը վերաբերի:

Վ. ՖՈՒՐՍԹ . — Ստոր հաճութիւն չեմ տար:  
դո՛ւ իմ հիւրս ես, քու ապահովութիւնը հսկել կը  
սպարտիմ:

ՄԵԼՔԹՆԱԼ . — Թող տուէք զիս: Եայրերուն  
մէջ խոտոր ձանապարհներ և դաղտ անցքեր գիտեմ.  
հոն բաւական բարեկամներ պիտի գտնեմ, որ զիս  
Թշնամիէն կը պահեն ու կը սրատապարեն:

ՄԹԱՌԻՏԱԽԵՐ . — Թողէ՛ք որ երթայ Ատուածոյ  
 օգնութեամբը, հոն բնաւ մատնիչ չի կայ . . . Բռնա-  
 ւորութիւնը այնչափ ատելի եղած է, որ ոչ որ անոր  
 գործիք կըլլայ : Պատեմարթէնն ալ Ունթէրվալտի  
 մէջ մեզի միարանօղներ պիտի գտնէ . և քաղսքը պի-  
 տի ապստամբեցնէ :

ՄԵԼԻՔՅԱԼ . — Մեր լուրերը ասբա՛հով ինչպէ՞ս  
 իրարու պէտք է հաղորդեմք առանց բռնաւորաց կաս-  
 կածը արթնցնելու :

ՄԹԱՌԻՏԱԽԵՐ . — Կրնամք Պրուննիյի կամ Թը-  
 բէյլի մէջ ժողովիլ, ս'ւր վաճառաց նաւերը կը մեր-  
 ձենան :

Վ. ՅՈՒՐՄԹ . — Այդչափ համարձակ գործերու  
 չէ . . . Ինձ մտիկ ըրէ՛ք . . . Լէին ճախ կողմը Պրուն-  
 նէն երթալու ճամբան, ճիշտ Միթկէնի դէմ՝ յանդի-  
 ժան անտառներէն ծածկուած մարգագետին մը կայ .  
 հովիւները անոր Բիւթլի (1) անունը կուտան, քանզի  
 այն տեղի ծառերը կտարած են . [Մէլքրնայիկն] : Չեր  
 և մեր նահանգաց սահմանը հոն է, [Սրատֆախայիկն] :  
 Պուք ալ Եո իյձէն հոն կրնաք անցնիլ ծովէն վարրիկ  
 մակոյիսով մը : Այս անո՛չակ տնասպառաց մէջ կրնամք  
 գիշերները մէկզմէկ գտնել, հոն դաղթնարար խորհըր-  
 դակցելու համար : Մեզմէ ամենքս տասը հաւատարիմ  
 անձինք կը բերե՛մք, սրտանց մեզի հետ միացած,  
 այսպէս կրնամք միաբանութեամբ խորհրդակցիլ ընդ-  
 հանուրին բարեացը համար՝ և օգնութեամբն Աստու-  
 ծոյ ազգու որոշում մ'ընել :

(1) Բիւրի : (Բէօթէնէն) ըստ Շխաբէ, խիւ՛ւ  
 հիմնահատակ ընել կը հշտնակէ :

ՄԹԱՌԻՏԱԽԵՐ , — Այնպէս թող լլայ : [Վ .  
 Ֆարսիկն] : Այժմ երկնցնոր ինձ քու արդար ձեռքը  
 [Մէլքրնայիկն] : Բուկը ալ սուր , այսպէս երեքնիս մի-  
 աբան , ձեռք ձեռքի մարդասիրտարար ստանց խաբէս-  
 թեան , յանուն մեր երեք գաւառաց պաշտպանօղու-  
 կան և յարձախօղական դաշնաւորութիւն մը կազմեմք  
 ցի՛եանս և ցմահ :

Վ. ՅՈՒՐՄԹ և ՄԵԼԻՔՅԱԼ . — Յիեանս և  
 ցմահ : [մէկ քանի վայրկեակ տակաւիկն ձեռք մնքի  
 տուա՛ք լուր կը կենան]

ՄԵԼԻՔՅԱԼ . — Ո՛վ հայրիմ ծերունի : Կուրցար  
 դու , և չի պիտի կրնաս տեսնել ազատութեան օրերը ,  
 բաց պիտի խնանաս զայն , երբ լեռնէ լեռ կրակի նը-  
 շանները զկպի երկինք պիտի բարձրանան , երբ բը-  
 նաւորաց հաստատուն ամբոցները պիտի զլորին , Հէլ-  
 վեախայիք պիտի գան բու խրճիթդ և ցնծութեան  
 աւետիսը տկանչիդ պիտի հասցնեն . և այն ի՞նչ վայ-  
 լուն օրէ որ պիտի շողա բու մութ գիշերիդ մէջ :

[Վարագոյրք կը գոցուի]


ՎԵՐՉ ԱՌԱՋԻՆ ԱՐՄԱՌՈՒՄԵՆՈՑ



ՇՐԼԼԵՐ



ԿԻՅԼՕՄ ԹԷԼԼ



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

## ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

ԱԹԷՆԿՀԱՈՒՁԷՆԻ ՏԱՆԸ ՄԷՉ  
ՉԻՆԱՆՇԱՆԻԻԲ ԵՒ ՍԱՂԱԽԱՐՏԻԻԲ  
ՇՈՒՐՁ ՊԱՏԵԱԼ ԿՈԹԱԶԵԻ ՍՐԱՀ ՄԸ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Պարօն ԱԹԷՆԿՀԱՈՒՁԷՆՐ, Ֆերուճի ուրսուն և հիկզ  
աւարկյան . բարձրահասակ, ազնուարարոյ դիրքով  
և ձեկրով . մաշիկակ մը հագրտ և շոնայժի և յ  
չիւրի և ման շինուտ գաւազակի մը կրրևաճ ,  
ՔՈՒՆԻ և ուրիշ վից խաւայներ զիկքը կը շրշա-  
ւարտեն , ձեռքերիկն հողոյ տանարեր և կաջիկ-  
ներ : ՈՒԼՐԻԻՍ տը ԲԻԻՏԷՆՉ աւսկէտի հագուաւով  
կը հոնէ :

ԲԻԻՏԷՆՉ . — Ահաւաղիկ եկայ հօրեզրայը իմ . . 4  
Ինչո՞ւ զիս ուզեր էք :

ԱԹԷՆԿՀԱՈՒՁԷՆ . — Ներեցէք , որ իմ տանս  
վաղեմի սոջորութեան համեմատ , առաւօտեան գա-

։ սթս մարդկանցս հետ խմեմ : [Բաժակու բան մը կը խմէ և վերջը միսկերուն կուտայ] : Ժամանակ մը ես ինքնին արտերուն և անտառայ մէջ իրենց կընկերանայի , իմ աչքերովս իրենց գործերը հսկելով , ինչ-պէս նաև կոխներու մէջ իմ դրօշակս իրենց կառավորողէր . այժմ տեսչութիւն միայն կարող եմ ընել , և մինչև արեգական տաքութիւնը չխմանամ . չեմ կարող լեռը ելլել զանոնք բնառելու : Այսպէս երթալով նեղցած շրջանի մը մէջ , կամայ կամայ դէպի աւելի նեղը կը մտնեմ . ամենէն վերջը՝ ուր բոլոր կեանքը կը դադարի : Հիմա՝ միայն իմ ստուերս եմ , և քիչ ժամանակէն միայն անունս պիտի մնայ :

